«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2016 թվականի

Բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ընդունելության խմբերի նվազագույն չափի սահմանման մասին

Լսելով և քննարկելով **«Բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ընդունելության խմբերի նվազագույն չափի սահմանման մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **2016-2017 ուսումնական տարվանից սկսած՝ կրթական ծրագրերի (բակալավրիատ և մագիստրատուրա) առաջին կուրսի ընդունելության խմբերի նվազագույն չափը սահմանել.**
   1) առկա և հեռակա ուսուցման բակալավրիատ՝ 25 ուսանող.
   2) առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրա՝ 15 ուսանող (բացառիկ դեպքերում, հիմնավոր պատճառաբանությամբ, առկա ուսուցման մագիստրատուրայում փոքր (10-14 ուսանող) խմբերի ձևավորման հարցը քննարկել ռեկտորատում):

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

22.06.2016 թ.